ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԱՆՍՈՒՐԵՀ ԳՈԼՄԵՅՄԻ

«ԻՐԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ԱՌԱՏՐԻ ՎՐԱ ԱՀԿ ՀՆԱՐԱՎՈՐ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ (ՁԵՌԱԳՈՐԾ ԳՈՐԳԵՐԻ ՇՈՒԿԱՅԻ ՕՐԻՆԱԿՈՎ)»

Ը.00.02 - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2026

Ատենախոսության թեման հաստատվել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում

Գիտական ղեկավար՝ Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Տիգրան Սերյոժայի Մարտիրոսյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Արմեն Գևորգի Ճուղուրյան
Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
Սոս Վիրաբի Խաչիկյան

Առաջատար կազմակերպություն՝ Հայաստանի եվրոպական համալսարան

Ատենախոսության հրապարակային պաշտպանությունը կայանալու է 2026 թվականի սեպտեմբերի 24-ին՝ ժամը 14:00-ին, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում (0025, ք. Երևան, Նալբանդյան փ. 128) գործող ՀՀ ԲԿԳԿ-ի Տնտեսագիտության 014 մասնագիտական խորհրդի նիստում:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2026թ. օգոստոսի 24 -ին:

014 մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Տ.Ս. Մարտիրոսյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսության թեմայի արդիականությունը: Տնտեսական բնագավառում Իրանի քաղաքականության կարևորագույն ուղղություններից է բարձրացնել տնտեսական գործունեության տեսակարար կշիռը, որպեսզի այն համաշխարհային պատշաճ դիրք գրավի տվյալ ոլորտում:

Աշխարհի երկրների, մասնավորապես զարգացող երկրների, հիմնական մտահոգություններից է գլոբալիզացիայի ընդլայնման աճող գործընթացը և տվյալ գործընթացի հետ առերեսումը: Գլոբալացումը բոլոր երկրներում հավասարապես ընթացող գործընթաց չէ, չնայած երկրները կարող են իրականացնել մշակված հնարավորությունների զգալի մասը, ճշգրտորեն բացահայտելով դրա բոլոր ասպեկտները, հետևաբար, առավելապես պատրաստվելով մրցակցության՝ միջազգային մակարդակում: Բոլոր երկրներն ազատ առևտուրն ապահովելու և համաշխարհային շուկայում մասնակցության համար պետք է անդամակցեն Առևտրի համաշխարհային կազմակերպությանը (ԱՀԿ): ԱՀԿ անդամակցության ջանքերը նպաստում են տեխնոլոգիայի հզորացմանն ու գործընթացի բարելավմանը, և համեմատական առավելության ապահովմանը: Իրանը ձգտում է անդամակցել ԱՀԿ-ին՝ ոչ նավթային արտահանումների ընդլայնման և համաշխարհային շուկաներում իր ներկայությունը պահպանելու նպատակով, գիտակցելով այն փաստը, որ երկրի տնտեսական պայմանները գլոբալ տնտեսության հետ համադրելը մեծ նշանակություն ունի աշխատանքի միջազգային բաշխման գործընթացում:

Երկիրը միատեսակ արտադրանքի տնտեսությունից և նավթի արտահանման եկամուտների կախվածությունից ձերբագատելու, և արտաքին առևտրի աճող պահանջարկը բավարարելու միակ միջոցը ոչ նավթային արտահանումների զարգացումն է և համաշխարհային շուկա մուտք գործելը: Ձեռագործ գորգի արտադրության և առևտրի ոլորտում զբաղվածության բարձր մակարդակից բացի, մարդկային ռեսուրսների և աշխատուժի զգալի չափով հասանելիության շնորհիվ, ոլորտին բավարար ուշադրությունը վկայում է այս արտադրանքի ծավալների մեծացման անհրաժեշտության մասին: Պատժամիջոցները, իրանական նախշերի գողանալն ու կրկնօրինակումը ևս վերջին տարիների ընթացքում հանգեցրել են իրանական ձեռագործ գորգերի արտահանման կրճատմանը: Հատկանշական է, որ մինչև 2013 թ. Իրանը նաև առաջատարն էր համաշխարհային շուկայում, սակայն հաջորդ տարվանից լավագույն արտահանողների իր բարձրագույն դիրքը զիջեց այլ երկրների, այդ թվում՝ Չինաստանին և Հնդկաստանին: Ցավոք, կազմակերպչական, կառուցվածքային, կառավարման և հատկապես առևտրի ոլորտում բացթողումների պատճառով, Իրանի գորգագործությունն անկում է ապրում: Գորգը ներառվում է այն ապրանքատեսակների շարքում, որոնք բարձրարժեք են, իսկ մյուս կողմից, դրանով ապահովվում է մեծաթիվ մարդկանց, հատկապես գյուղական բնակչության, զբաղվածությունը: Կարելի է ասել, որ գորգն ազգային տնտեսությունում հատուկ տեղ է գրավում զբաղվածության հարցով, ապահովելով ավելացված արժեք և արտահանում:

Շատ կարևոր է, որ քաղաքականություն մշակողները հաշվի առնեն, որ ԱՀԿ անդամակցությունը պարզապես նպատակ չէ: Եվ դա ինքնին չի հանգեցնի համաշխարհային համակարգում երկրների դիրքի փոփոխությանը: Դա արդյունավետ է այն ժամանակ, երբ այս կանոնակարգի կապակցությամբ երկրները և իրենց ծրագրերի արտաքին և ներքին քաղաքականությունն ունենան միջազգային ներկայություն: Հետեւաբար, ոչ միայն ներկայությունը, այլև ԱՀԿ կամ որևէ այլ միջազգային կազմակերպության անդամակցությունը, չեն կարող լուծել և զարգացնել երկրի տնտեսական խնդիրները:

Քանի որ Իրանի ձեռագործ գորգը նավթից հետո երկրորդ ազգային կապիտալն է և Իրանի ազգային մշակույթի ցուցանիշներից մեկը, այն ուղղակի կամ անուղղակի ձևով հազարավոր աշխատատեղեր, տնային տնտեսության հնարավորություն, ԱԱՀ, արտարժույթային եկամուտ է ապահովում: Իսկ ոչ նավթային արտահանումների զգալի մասնաբաժինը վերագրվում է հենց ձեռագործ գորգերին: Այս ապրանքատեսակը վկայում է Իրանի մշակույթի, արվեստի և միջազգային հարթակներում նուրբ հգորության մասին և դրանով իսկ առավել կարևորվում: Մասնավորապես, որ վերջին տարիներին մրցակիցները պատճենահանելով իրանական գորգերի նախշերը, յուրացրել են գորգի համաշխարհային շուկայի զգալի մասնաբաժինը: Հետևաբար, այս ազգային ու Իրանի տնտեսության ու արտաքին առևտրի համար որոշիչ դեր ունեցող ապրանքատեսակի մասին հետազոտությունն ու ուսումնասիրությունը շատ մեծ նշանակություն ունի: Մասնավորապես՝ ԱՀԿ անդամակցության դեպքում:

<u>Հետազոտության նպատակը և խնդիրները:</u> Ատենախոսության հիմնական նպատակն է զարգացնել Իրանի տնտեսությունը և մեծացնել արտահանումների ծավալը, հաշվի առնելով ԱՀԿ-ն անդամակցելու դրական ազդեցություններն՝ Իրանի ձեռագործ գորգերի արտաքին առևտրի ոլորտում:

Վերը նշված նպատակին հասնելու համար աշխատանքում առաջադրվել են հետևյալ խնդիրները.

- ուսումնասիրել ԱՀԿ էությունն ու նրա օգուտներն արտաքին առևտրում,
- ուսումնասիրել իրանական գորգի արտահանումն ու մրցակիցների գորգերի արտահանումները վերջին տարիներին,
- վերլուծել ԱՀԿ անդամակցության առավելություններն՝ արտաքին առևտրի զարգացման գործում,
- վերլուծել ԱՀԿ անդամակցության առավելությունների աստիճանակարգումը, արտահանման ոլորտում արտահանողների ժողովրդագրական առանձնահատկությունների և գիտելիքահեն կառավարման նշանակությունը,
- գտնել լուծումներ համաշխարհային շուկայում ձեռագործ գորգերի կարգավիճակի բարելավման, արտահանման ծավալների ու արտաքին շուկաների մասնաբաժնի մեծացման ուղղությամբ և ներկայացնել առաջարկություններ:

<u>Հետազոտության օբյեկտը և առարկան:</u> Հետազոտության օբյեկտ է հանդիսանում Իրանի Իսլամական Հանրապետության արտաքին առևտուրը՝

ձեռագործ գորգերի վրա շեշտադրմամբ արտահանումների հետագա ավելացման և Իրանի տնտեսության դիրքի բարելավման հեռանկարով:

Հետազոտության առարկան է Իրանի ԱՀԿ անդամակցության ազդեցության ուսումնասիրումը՝ ձեռագործ գորգերի արտաքին առևտրի վրա:

Ատենախոսության մշակվածության աստիճանը: Բազմաթիվ հետազոտություն-ներ են իրականացվել ԱՀԿ-ի, իրանական գորգի տնտեսական հանգամանքների, իրանական գորգի առևտրի և արտահանումների վերաբերյալ, որոնցից անդրադառ-նանք մի քանի հետազոտողների անուններին ու ուսումնասիրության թեմաներին.

Mirjamali M and et al (2020), «Մարքազի (Կենտրոնական) նահանգում գորգի արվեստի-արդյունաբերության մասին ռազմավարական վերլուծություն», Kavand A et al (2020), «Ուսումնասիրություն Իրանում ձեռագործ գորգի արտահանման վրա ազդող գործոնների մասին՝ (NARDL)», Pasban M and et al (2018), «Իրանի ԱՀԿ անդամակցության իրավական ասպեկտները՝ արտահանման ու ներմուծման կանոնակարգերի շրջանակներում», Zarea MH and et al (2018), «Իրանի ԱՀԿ անդամակցության ազդեցությունը՝ գյուղատնտեսության և արդյունաբերության ոլորտների արտաքին առևտրի վրա: RDCGE մոդելի կիրառման օրինակով», Fathi Y and Yosefi MGH (2018), «Բաց առևտրի ազդեցությունն արտադրական սեկտորի վրա՝ ԱՀԿ անվանական օժանդակության գործակիցների շրջանակներում: Dynamic Panel Data մոտեցմամբ», Amini A and et al (2018), «Մարկետինգային արդյունավետության վրա հարմարվողական վարքագծի ռազմավարության ազդեցության կառուցվածքային մոդելը: Մարկետինգային շեշտադրման միջնորդավորված դերը ձեռագործ գորգերի արդյունաբերության հարցով», Bidabad, B and Anaraki (2019), «Իրանի ԱՀկ անդամակցության ազդեցությունը ցեմենտի արդյունաբերության վրա: Միաժամանակյա հավասարումների (Simultaneous Equations) դինամիկ անհավասարակշռության կարգաբերման մոդել (DDAM)», Taghipourian M and et al (2020), «Մարկետինգի արդյունավետության և կարողությունների դերը՝ արտահանման շուկայի ուղղվածության և իրանական ձեռագործ գորգերի գծով գործող ձեռնարկությունների արտահանման գործունեության միջև կապի հարցում», Alipour MS and et al (2017), «ԱՀկ: Անվտանգություն և տնտեսական զարգացում»:

Ատենախոսության տեսական, տեղեկատվական և մեթոդաբանական հիմքերը: Հետազոտության որակական հատվածում կիրառվել են երկրորդական տվյալները (գրականության ուսումնասիրում), ինչպես նաև հարցազրույցի մեթոդը՝ նպատակաուղղված ձնագնդի տարբերակով, իսկ քանակականի համար՝ հարցաթերթիկի (31 հարցերից կազմված) միջոցով հավաքած առաջնային տվյալները: Հարցվողների (Իրանում տվյալ ոլորտում ավելի քան 10 տարի աշխատանքային փորձ ունեցող գորգ արտահանողների, Իրանի առևտրի նախարարության տնօրենների և Իրանի գորգի ազգային կենտրոնի փորձագետների շրջանում) ընտրանքի համար առաջնորդվել ենք նպատակաուղղված պատահականության սկզբունքով: Տվյալները վերլուծվել են

Նկարագրական ու ինֆերենցիալ (եզրահանգման) վիճակագրական մեթոդներով: Նկարագրականի դեպքում կիրառվել են հաճախականության բաշխվածության, միջինի և ստանդարտի շեղման աղյուսակները, իսկ ինֆերենցիալի դեպքում՝ Կոլմոգորով-Սմիրնովի (Kolmogorov-Smirnov), Sign test, «Student's t» (մեկ գործոնային), Ման Վիթնի (Mann-Whitney U), Ֆրիդմանի (Freidman), Spearman's Coefficient of Correlation, load factor թեստերը, Lisrel ծրագիրը և SPSS ծրագրի 16.00 տարբերակը:

Ատենախոսության հիմնական գիտական արդյունքները և նորույթը: Հետազոտության գիտական նորույթը ստացվել է և՝ տեսական և՝ գործնական ուսումնասիրություններից, որոնք կարելի է ներկայացնել հետևյալ շարքով.

- վիճակագրական և քանակական վերլուծությունների հիման վրա բացահայտվել և ըստ նշանակության դասակարգվել են ԱՀԿ-ին Իրանի անդամակցելու առավելությունները ձեռագործ գորգերի արտադրության ոլորտում:
- վեր են հանվել մրցակից երկրների փորձի և շուկայական դիրքավորման հաշվառմամբ Իրանի ձեռագործ գորգերի արտահանման զարգացմանն ուղղված գիտականորեն հիմնավորված մոտեցումներն ու հիմնական ուղղությունները,
- մշակվել է ԱՀԿ-ին անդամակցության հնարավորության հաշվառմամբ համաշխարհային շուկայում Իրանի ձեռագործ գորգերի արտահանման ծավալների մեծացմանն ուղղված հայեցակարգային մոդել:

Ատենախոսության տեսական և կիրառական նշանակությունը: Հետազոտության արդյունքները կարող են նպաստել ԻԻՀ արտաքին առևտրային գործունեության իրականացման շրջանակներում կարգավորման արդյունավետության բարձրացմանը, բարելավելով Իրանի տնտեսության դիրքը, կենտրոնանալով ոչ նավթային ռեսուրսների վրա: Հետազոտության արդյունքները կարող են օգտագործվել նաև Իրանի առևտրի զարգացման կազմակերպության, Իրանի գորգի ազգային կենտրոնի և համապատասխան այլ մարմինների կողմից, ինչպես նաև թեմային վերաբերվող համապատասխան քաղաքականության կատարելագործման և իրականացման, գորգերի արդյունաբերության զարգացման ուղղությամբ: Այն կարող է նաև օգտակար լինել նույն թեմայով զբաղվող փորձագետների, արտահանողների, հետազոտողների, ասպիրանտների, ուսանողների և պրակտիկ աշխատողների համար:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից: Ատենախոսության ծավալը՝ ներառյալ օգտագործած գրականության ցանկը, կազմում է 127 էջ, այդ թվում՝ 40 աղյուսակ, 15 գծապատկեր:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻԱՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածությունում հիմնավորվել են ատենախոսության թեմայի արդիականությունը, ներկայացվել են հետազոտության օբյեկտը, առարկան, նպատակը, խնդիրները, տեսական, տեղեկատվական և մեթոդաբանական հիմքերը, հիմնավորվել են հիմնական արդյունքները և գիտական նորույթը, նշվել են վերջիններիս գործնական նշանակությունը և կիրառման հնարավորությունները:

Ատենախոսության առաջին՝ «Առևտրի Համաշխարհային Կազմակերպության հիմնական առանձնահատկությունները» գլխում ներկայացվել են ԱՀԿ էությունն ու գործառույթները, պատմությունը, սկզբունքները, կառուցվածքը և նրան անդամակցելու ընդհանուր փուլերը: Անդրադարձ է կատարվել անվտանգության փաստարկներին ու հիմնավորումներին, ապա ներկայացվել են զարգացող երկրների դիրքը ԱՀԿ-ում:

Վերջում ուսումնասիրվել է Իրանի տարբերակը ԱՀԿ թեմայի շրջանակներում, որտեղ ներկայացվել են Իրանի անդամակցության մանրամասները՝ որպես դիտորդ անդամ, անդամակցության դիմումների և բոլոր համապատասխան արգելքների նախապատմությունը: Ըստ որի, Իրանի անդամակցության դիմումը ներկայացվել է 1996 թ., աշխատանքային խումբը ձևավորվել է 2005 թ., աշխատանքային խմբի առաջին նիստը կայացել է 2009 թ., իսկ ապրանքատեսակների և ծառայությունների շուկայի առաջնային հասանելիության առաջարկությունը և այլ հանգամանքներ դեռևս չեն իրականացվել Իրանի հարցով:

Իրանի ԱՀԿ անդամակցության դեպքում, այլ նախադրյալների շարքում, Իրանում պահպանվելու են մտավոր սեփականության օրենքները: Այն պահանջում է առևտրում մի շարք հիմնարար գործողությունների իրականացում: Այս փոփոխության հետ կապված բազմաթիվ փորձագետներ գտնում են, որ ներկա դրությամբ բավականին թանկ է արժենալու Իրանի տնտեսության համար: Հաշվի առնելով երկրների համա-ձայնագրերը, անհրաժեշտ է, որ հանվեն սակագները: Ներկա դրությամբ, նավթի համաձայնագրերը գործում են ԱՀԿ շրջանակներից դուրս, որի համաձայնագրերը չեն ներառում նավթամթերքը: Ուստի արդյունաբերական երկրներից էներգիայով հարուստ երկրներ, այդ թվում՝ Իրան, ներմուծումը ներառում է սակագնից հրաժարում կամ դրա կրճատում: Սակայն արդյունաբերական երկրներ նավթի ներմուծման տարբերակում սակագնից հրաժարվելու կամ այն կրճատելու և ներմուծման մասին խոսք չի գնում և նավթը կազմում է նրանց ներմուծումների զգալի մասը:

Ատենախոսության երկրորդ՝ «Ձեռագործ գորգի արդյունաբերության դերն ու տեղն Իրանի տնտեսության, արտահանման և արտաքին առևտրի ոլորտում» գլխում ուսումնասիրվել են Իրանի ներքին համախառն արդյունքն (ՀՆԱ) ու տնտեսական աճը, վերջին տարիներին ձեռագործ գորգի արտահանման նշանակությունն ու արտահանման վիճակը, Առևտրի համաշխարհային կազմակերպությունն ու «Trade Map» բազան, ինչպես նաև գորգի

արդյունաբերության ոլորտում գիտելիքի կառավարման դերը և Առևտրի համաշխարհային կազմակերպությանն անդամակցումը:

Ըստ աղյուսակ 1-ի տվյալների, հաշվի առնելով ՀՆԱ աճի նվազման միտումները, նավթի արտադրության ու արտահանման նվազումը նախադրյալներ է ստեղծում ՀՆԱ աճի զգալի կրճատման համար: Հարկավոր է նկատի ունենալ, որ ներկա դրությամբ ՀՆԱ աճի ցածր մակարդակը հիմնականում պայմանավորված է տնտեսական աճի փոքր թվերով:

Աղյուսակ 1.

Իրանի ՀՆԱ-ի աճը 2016-2020 թթ.[1]

Տարի	ՀՆԱ աճ, %
2016	12.52
2017	3.73
2018	-5.42
2019	-6.51
2020	-4.99

Արժույթի միջազգային հիմնադրամը 2019 թ. համար Իրանի իրական ՀՆԱ բացասական աճ էր կանխատեսել[2], որը պայմանավորել էր ԱՄՆ պատժամիջոցների խստացման հետևանքներով: Ինչպես նաև կանխատեսել էր 2019 թ. Իրանի սղաճը՝ 7.35 տոկոս, որը նախորդ տարվա համեմատությամբ 2.5 տոկոս աճի մասին է վկայում: Իսկ նախորդ տարվա համեմատությամբ Իրանի ընթացիկ հաշվեկշիռը գնահատվել էր ՀՆԱ-ի 1.4 տոկոսը, և կանխատեսվել էր, որ 2019 և 2020 թթ. համապատասխանաբար այն կազմելու էր -7.2 և -4.3 տոկոս:

2018 թ. միջուկային համաձայնագրից ԱՄՆ-ի դուրս գալու և պատժամիջոցների խստացման արդյունքում, կրճատվեցին Իրանի նավթի արտահանումների ծավալները և երկիրը կրկին առերեսվեց տնտեսական լճացման հետ: Համաձայն Արժույթի միջազգային հիմնադրամի գնահատման, Իրանի ՀՆԱ-ն 2018 թ. կրճատվել է 9.5 տոկոսով:

Ինչ վերաբերվում է իրանական ձեռագործ գորգերի արտահանման անկումային պատկերին, 2017 թ. իրանական ձեռագործ գորգերի արտահանումը 2015 թ. կրճատումից և 2016 թ. կրկին աճից հետո կազմել է 426 մլն ԱՄՆ դոլար, սակայն 2018 թ. ԱՄՆ կողմից Իրանի դեմ կրկին պատժամիջոցների սահմանման արդյունքում գրանցված կրճատումների արդյունքում կազմեց 238 մլն ԱՄՆ դոլար, ապա ավելի զգալի չափերով դրսևորվեց արդեն 2019 թ. և 2020 թ. առաջին եռամսյակում, համապատասխանաբար՝ 69 և 6.2 մլն ԱՄՆ դոլար:

[1] www.world bank.org.2019

Իրանը 2018 թ. հաջորդելով Հնդկաստանին, 238 մլն ԱՄՆ դոլար արժողությամբ արտահանումների ծավալով այս ապրանքատեսակի արտահանման երկրորդ հորիզոնականն է գրաղեցրել, սակայն 2019 թ. ծավալների կրճատման (73 մլն ԱՄՆ դոլար) արդյունքում, իր տեղը զիջել և հայտնվել է երրորդ տեղում:

Թեման շարունակելով ուսումնասիրվել է արտահանման ճշգրիտ վիճակագրությունը՝ ըստ «Trade Map» բազայում Առևտրի համաշխարհային կազմակերպության կողմից ամփոփված տարբեր երկրների ապրանքատեսակների առևտրի վերաբերյալ վիճակագրության և տեղեկատվության: «Trade Map» բազան ներկա դրությամբ տրամադրում է ձեռագործ գորգերի արտահանման շուկաների գնահատման նպատակով ոլորտի գործարարների համար անհրաժեշտ ամենավստահելի տվյալները:

«Trade Map» բազայի 2019 թ. հրապարակած թիվ 5701 ծածկագրով ներկայացված ձեռագործ գորգերի համաշխարհային տվյալների համաձայն, այդ գորգերի արտահանումների ընդհանուր ծավալը կազմել է 828 մլն ԱՄՆ դոլար, որից Իրանի մասնաբաժինը կազմել է 73 մլն-ից փոքր-ինչ ավել: Գորգերի արտահանման առումով, նշված ժամանակային կտրվածքում առաջին եռյակում Հնդկաստանին ու Պակիստանին հաջորդում է Իրանը[3]:

Ապա անդրադարձել ենք գիտելիքի կառավարմանը և հիմնարկներում ու գորգերի արտահանման ոլորտում, և ընդհանրապես, ԱՀԿ անդամակցության հարցում դրա կարևորությանը: Գիտելիքի կառավարման արդյունքում ապահովվում են՝ ապագայում մրցունակությունը, նոր արտադրատեսակների և ծառայությունների տեսանկյունից առաջատար լինելը, նոր շուկաների նվաճումն ու նոր շուկաների ձևավորումը, ինչպես նաև գիտական կապիտալի կորստի բացառումը: Խիստ անհրաժեշտություն է համարվում գիտելիքի կառավարման բացահայտումը՝ որպես կազմակերպական գործունեության գերակա ոգի, այն իրագործելու ճանապարհին:

Այսօր կապիտալը, բնական ռեսուրսներն ու աշխատուժը և այլն չեն համարվում գլխավոր տնտեսական ռեսուրսները, այլ վերջիններիս համար հիմք է ծառայում գիտելիքը: Գիտելիքի կառավարումը՝ որպես տվյալ ձեռնարկության հաջողության համար անհրաժեշտ ու հիմնական հատված, ներառում է կազմակերպական գաղափարների մի մեծ տիրույթ, այդ թվում՝ ռազմավարական, տնտեսական, վարքաբանական ու կառավարման նորամուծություններ: Ներկայիս աշխարհում, որտեղ ապրանքների արտադրությունն ու ծառայությունների մատակարարումը խիստ գիտելիքահենք են դարձել, մրցակցային առավելության ապահովման համար բանալի կապիտալ է համարվում գիտելիքը: Իրանը ԱՀԿ անդամակցելու համար պետք է բարձրացնի ներքին սպառողների շրջանակում արտադրանքի որակը, իսկ ԱՀԿ անդամակցությունը հնարավոր կդառնա գիտելիքի կառավարման ռազմավարության կիրառման շնորհիվ: Իրանի ԱՀԿ

[3] www. Trade map base / 2019 ; National Union of Cooperatives of Iranian Handmade Carpet Manufacturers-2029.

անդամակցությունը կնշանակի մուտք՝ համաշխարհային տնտեսություն: Հետևաբար, հաշվի առնելով կատարված հետազոտությունների արդյունքները, գիտելիքի կառավարումը համարվում է առևտրային ռազմավարություն, որը հարկավոր է ԱՀԿ հասանելիության համար նախադրյալներ ստեղծելու համար, և ուղիղ հարաբերական է արտահանումների ծավալների աճի ու արտաքին առևտրի ընդլայնման հետ:

Ատենախոսության երրորդ՝ «ԱՀԿ անդամակցության արդյունքում առավելությունների վերլուծությունն՝ Իրանի ձեռագործ գորգի արդյունաբերության ոլորտում» գլխում ներկայացվում է կատարված հարցման առաջնային տվյալների և քանակական հետազոտության արդյունքների վերլուծությունը: Տվյալ վերլուծությունն ապահովելու նպատակով, փաստաթղթերի, հարցաթերթիկների, հարցազրույցների ուսումնասիրությունների միջոցով հաշվարկվել են անհրաժեշտ տվյալներ, ցուցանիշներ: Օգտագործվել է հարցման մեթոդը՝ հետազոտության ռազմավարության հիման վրա: Հարցման համար կիրառվել է հարցաթերթիկ, ուսումնասիրվել են համապատասխան փաստաթղթեր, ակտեր և գրականություն: Հետազոտությունն իրականացվել է կիրառական հետազոտությունների՝ նկարագրական-հետախուզական կորելացիոն տարբերակով, որն իրագործվել է դաշտային ուսումնասիրության շրջանակներում:

Գործնական բաժնի հիմք են հանդիսանում հետազոտվողներից (այդ թվում՝ գորգի արդյունաբերության ոլորտում ավելի քան 10 տարի աշխատանքային փորձ ունեցող ձեռագործ գորգեր արտահանողների, Իրանի զարգացման և առևտրի կազմակերպության և գորգի ազգային կենտրոնի տնօրենների) հավաքագրված առաջնային տվյալները: Հետազոտության գործիքն է հարցաթերթիկը, որը բաղկացած է 6 բաց (ընդհանուր) և 31 մասնագիտական հարցերից, որոնք մշակվել են առաջադրված վարկածների հիման վրա: Մասնագիտական հարցերը մշակված են Լիկերտի 5 տարբերակով գնահատման մոդելի հիման վրա: Տվյալների հավաքագրման նպատակով, կիրառվել է պարզ պատահական սկզբունքով (և առանց փոխարինման) նմուշառության տարբերակը: Ընտրված առաջնային բոլոր տվյալները վերլուծվել են վիճակագրական տարբեր մեթոդներով՝ Lisrel և SPSS ծրագրերով:

Վերջում տեսական և գործնական ուսումնասիրությունների տվյալների հիման վրա ներկայացվել է հայեցակարգային մոդել Իրանի ձեռագործ գորգի արդյունաբերության առավելությունների վերաբերյալ՝ ԱՀԿ անդամակցության հանգամանքի դիտարկմամբ (գծապատկեր 1):

Հարցվածների քանակը որոշելու համար հեղինակն օգտագործել է Դ.Մորգանի աղյուսակը: Ըստ այդմ, ընդհանուր 100 հոգանոց հարցվողների հանրույթից պատահական սկզբունքով ընտրվել են 80 անձ, որոնք պատասխանել են հարցաթերթիկներին: Հետազոտության համար նախատեսվել են անկախ, կախյալ և ճշգրտման փոփոխականներ, որոնց միջև կապը բացահայտելով, փորձել ենք ստուգել վարկածների հավաստիությունը:

Հետազոտության փոփոխականները հետևյալն են.

1. Կախյալ փոփոխականներ՝ ԱՀԿ Իրանի անդամակցության արդյունքները

- ձեռագործ գորգի իրացման գնի նվազում,
- արտադրության ոլորտում գիտական և մասնագիտական ներուժի աճ,
- շուկայական պահանջարկի և ճաշակի ուսումնասիրություն՝ միջազգային շուկայում,
- մրցակիցների սադրանքների չեզոքացում,
- համեմատական առավելության ստեղծում ձեռագործ գործերի կապակցությամբ,
- առավել մեծ վերահսկողություն՝ Իրանի ձեռագործ գորգի նկատմամբ:

2. Անկախ փոփոխական՝ ԱՀԿ Իրանի անդամակցությունը

3. Ճշգրտման փոփոխականներ՝ տարիք, սեռ, կրթություն

Գծապատկեր 1-ի մոդելով ակնհայտ են վեց կախյալ փոփոխականներն ու ԱՀԿ-ի մեկ անկախ փոփոխականը:



Գծապատկեր 1. Հետազոտության փոփոխականները

Հարցաթերթիկի հարցերի հուսալիությունը պարզելու նպատակով հաշվարկել ենք Քրոնբախի ալֆայի (Cranbach's Alpha) գործակիցը, որը 1 թվին ինչքան մոտ լինի, այնքան ավելի բարձր է հարցաթերթիկի հարցումների հուսալիությունը (ներքին կայունությունը) (աղյուսակ 2):

Աղյուսակ 2.

Քրոնբախի ալֆայի (Cranbach's Alpha) գործակցի թեստի արդյունքները*

h	Փոփոխականներ	Քրոնբախի ալֆայի (Cranbach's Alpha) գործակիցը**
1	Ձեռագործ գորգի իրացման գնի նվազում	0.7219

2	Արտադրության ոլորտում գիտական և մասնագիտական ներուժի աճ	0.9301
3	Շուկայական պահանջարկի և ճաշակի ուսումնասիրություն՝ միջազգային շուկայում	0.7776
4	Մրցակիցների սադրանքների չեզոքացում	0.7111
5	Համեմատական առավելության ստեղծում ձեռագործ գործերի կապակցությամբ	0.9192
6	Առավել մեծ վերահսկողություն՝ Իրանի ձեռագործ գործգի նկատմամբ	0.8961

* Տվյալների վերլուծությունն իրականացվել է SPSS և Lisrel ծրագրերի օգնությամբ:

- *Վարկածների ստուգում (Կոլմոգորով-Սմիրնովի թեստը) կապված փոփոխականների նորմալության հետ*

Ինչպես հայտնի է, մինչ ուսումնասիրության համար անհրաժեշտ փորձի ընտրությունը, սահմանվել են փոփոխականների նորմալությունը: Փոփոխականների նորմալ լինելու դեպքում, կարող ենք օգտագործել պարամետրային փորձերը, հակառակ դեպքում խորհուրդ է տրվում օգտագործել ոչ պարամետրային համարժեք փորձեր: Քանի որ ուսումնասիրվող փոփոխականները ինտերվալային են, ապա առաջարկվում է Կոլմոգորով-Սմիրնովի փորձը՝ որպես փոփոխականի նորմալության որոշման լավագույն միջոց: Ուստի, վարկածների պատկերը ներկայացվել է հետևյալ կերպ:

H0: փոփոխականն ունի նորմալ բաշխվածություն

H1: փոփոխականը չունի նորմալ բաշխվածություն

Հուսալիության աստիճանը 0.05-ից ցածր լինելու դեպքում, հերքում ենք H0–ն և ընդունում՝ H1-ը: Այս դեպքում ներկա և ցանկալի վիճակների միջև առկա է տարբերություն (1, 2, 3, 5, 6 վարկածները): Հակառակ դեպքում, երբ 0.05-ից բարձր ցուցանիշ է ստացվում, հերքում ենք H1–ը և ընդունում՝ H0-ն: Այս դեպքում ներկա և ցանկալի վիճակների միջև, այսինքն՝ անդամակցության դեպքում, չկա տարբերություն (4-րդ վարկած) (P- Value = Հուսալիության աստիճանը): Եթե փորձարկման հուսալիությունը 0.05-ից պակաս է, ապա մենք կարող ենք ասել, որ ուսումնասիրվող փոփոխականը ոչ նորմալ, իսկ հակառակ դեպքում՝ այն նորմալ փոփոխական է:

Աղյուսակ 3.

Կոլմոգորով-Սմիրնովի փորձը կապված Իրանի ԱՀԿ-ի անդամակցության արդյունքների հետ*

Փոփոխականներ	**Միջին**	**Ստանդարտ շեղում**	**Կոլմոգորով-Սմիրնովի Z ցուցիչը**	**Հուսալիության աստիճանը (P-Value)**	**Արդյունքը**

Ձեռագործ գործի իրացման գնի նվազում	3.33	0.740	1.45	0.03	Ոչ նորմալ
Արտադրության ոլորտում գիտական և մասնագիտական ներուժի աճ	4.07	0.941	1.462	0.028	Ոչ նորմալ
Շուկայական պահանջարկի և ճաշակի ուսումնասիրություն՝ միջազգային շուկայում	4.33	0.671	1.502	0.022	Ոչ նորմալ
Մրցակիցների սադրանքների չեզոքացում	3.43	0.773	0.762	0.604	Նորմալ
Համեմատական առավելության ստեղծում ձեռագործ գործերի կապակցությամբ	3.86	0.836	1.533	0.018	Ոչ նորմալ
Առավել մեծ վերահսկողություն՝ Իրանի ձեռագործ գործի նկատմամբ	3.86	0.774	1.478	0.025	Ոչ նորմալ

* Աղյուսակը կազմվել է SPSS ծրագրի օգնությամբ:

Հետազոտության մեջ փորձ է արվել չափել անձերի տեսակները և հետազոտել մեթոդներն ու ճանապարհները, կարողանալ երևույթի մասին մարդկանց որակական հայացքները և տեսությունները ձևափոխել և արտահայտել թվերով: Հետազոտության մեթոդաբանության մեջ նկարագրվել են կիրառված մեթոդները: Համապատասխան վիճակագրական մեթոդ օգտագործելու համար առաջին հերթին ուսումնասիրվել են տարբեր տեսակի քննարկումներ: Տվյալների նորմալ բաշխումը հետազոտելու համար օգտագործվել է Կոլմոգորով-Սմիրնովի թեստը:

Կիրառվել է «Sign» թեստը (ոչ պարամետրիկ թեստերից)՝ 1, 2, 3, 5 և 6-րդ վարկածների համար, որոնք ոչ նորմալ էին: Կրկին հուսալիության աստիճանը 0.05-ից ցածր լինելու պատճառով, համարում ենք, որ առկա է հուսալի կապ՝ Իրանի անդամակցության և սույն վարկածների իրականացման միջև: Այսինքն՝ անդամակցու-թյան դեպքում այդ վարկածները իրականություն կդառնան:

Աղյուսակ 4.

Sign test -ի թեստի արդյունքները 5 ոչ նորմալ վարկածների վերաբերյալ*

Միջինը	Միջինից ցածր թիվ	Միջինին հավասար թիվ	Միջինին գերազանցող թիվ	Հուսալիության աստիճան
3.33	15	5	60	0.0001
4.2	7	5	68	0.0001
4.5	3	7	75	0.0001
4	69	3	69	0.0001
4	8	2	70	0.0001

* Աղյուսակը կազմվել է SPSS ծրագրի օգնությամբ:

Միայն 4-րդ վարկածի դեպքում, որը նորմալ էր, կիրառում ենք «Student T» պարամետրիկ թեստը, որտեղ կրկին հուսալիության աստիճանը 0.05-ից բարձր

լինելու պատճառով, առկա է հուսալի կապ, այսինքն՝ Իրանի անդամակցությամբ հնարավոր է, որ մրցակիցների սադրանքները չչեզոքանան:

Աղյուսակ 5.

«Student T» թեստի արդյունքները 1 նորմալ վարկածի վերաբերյալ*

Միջին	Չափանիշի շեղում	t ցուցանիշ	Հուսալիության աստիճան
3.43	0.773	4.99	0.0001

* Աղյուսակը կազմվել է SPSS ծրագրի օգնությամբ:

Ֆրիդման թեստը (Friedman test) կիրառել ենք հետազոտության վարկածները դասակարգելու հավանականությունը պարզելու նպատակով: Կրկին հուսալիության աստիճանը 0.05-ից ցածր լինելու պատճառով, համարում ենք, որ առկա է հուսալի կապ: Այսինքն՝ վարկածները դասակարգման ենթակա են:

Աղյուսակ 6.

Ֆրիդմանի թեստի արդյունքները վարկածների դասակարգման վերաբերյալ*

h	Ցուցանիշ	Ստացված թիվը՝
1	Fridman k^2	147.05
2	Ազատության աստիճանը	5
3	Հուսալիության աստիճանը	0.000

* Աղյուսակը կազմվել է SPSS ծրագրի օգնությամբ:

Ներկայացնում ենք ԱՀԿ անդամակցության դեպքում իրանական ձեռագործ գորգերի արդյունաբերության առավելությունների դասակարգման աղյուսակը:

Աղյուսակ 7.

ԱՀԿ անդամակցության դեպքում իրանական ձեռագործ գորգերի արդյունաբերության առավելությունների դասակարգումը*

Գործոնները	Դասակարգումների միջինը	Առաջնահերթությունը
Ձեռագործ գորգի իրացման գնի նվազում	2.34	5
Արտադրության ոլորտում գիտական և մասնագիտական ներուժի աճ	4.22	2
Շուկայական պահանջարկի և ճաշակի ուսումնասիրություն՝ միջազգային շուկայում	4.94	1
Մրցակիցների սադրանքների չեզոքացում	2.06	6
Համեմատական առավելության ստեղծում ձեռագործ գործերի կապակցությամբ	3.71	4
Առավել մեծ վերահսկողություն՝ Իրանի ձեռագործ գորգի նկատմամբ	3.73	3

* Աղյուսակը կազմվել է աղյուսակ 6-ի հիման վրա:

Փոփոխականների ներքին կապակցվածությունը ցույց տալու նպատակով, կիրառում ենք «Load Factor» թեստը, որն ինչքան մեծ է 0.5-ից, այդքան ավելի հուսալի է և փոփոխականները կապակցված են: Այստեղ առաջին փոփոխականը նվազագույն և 5-րդն առավելագույն ցուցանիշն է գրանցել այս առումով:

Աղյուսակ 8.

«Load Factor» թեստի արդյունքները փոփոխականների կապակցվածության վերաբերյալ*

h	Փոփոխականներ	Load Factor-ի մակարդակը
1	Ձեռագործ գորգի իրացման գնի նվազում	**0.607**
2	Արտադրության ոլորտում գիտական և մասնագիտական ներուժի աճ	0.838
3	Շուկայական պահանջարկի և ճաշակի ուսումնասիրություն՝ միջազգային շուկայում	0.804
4	Մրցակիցների սադրանքների չեզոքացում	0.828
5	Համեմատական առավելության ստեղծում ձեռագործ գործերի կապակցությամբ	**0.918**
6	Առավել մեծ վերահսկողություն՝ Իրանի ձեռագործ գորգի նկատմամբ	0.827

* Աղյուսակը կազմվել է SPSS ծրագրի օգնությամբ:

Լիզրել ծրագրով վերլուծությունների արդյունքում (ըստ՝ t-value-ի) ստացած գծապատկեր 3-ից պարզ է դառնում, որ յուրաքանչյուր փոփոխականի «Load Factor»-ը նշանակալի է: Այն նաև վկայում է կախյալ փոփոխականների վրա անկախ փոփոխականի ազդեցության աստիճանի մասին: Այսպիսով, ԱՀԿ անդամակցությունն առավելագույն ազդեցությունն ունի X5 (հինգերորդ փոփոխականի) և նվազագույնը՝ X1 (առաջին փոփոխականի) վրա:



Գծապատկեր 2. Փոփոխականների «Load Factor» թեստը

Ման Վիթնի (Mann-Whitney U) թեստը (ոչ պարամետրիկ թեստերից) կիրառվել է պարզելու համար, թե արդյոք տարբերվում են հարցմանը մասնակից կին և տղամարդ արտահանողների կարծիքները հետազոտության փոփոխականների վերաբերյալ: Այստեղ չկա որևէ տարբերություն, բացառությամբ՝ 2-րդ փոփոխականից, այն է՝ «Արտադրության ոլորտում գիտական և մասնագիտական ներուժի աճ»: Միայն 2-րդի դեպքում հուսալիության աստիճանը 0.05-ից ցածր է, այսինքն՝ առկա է հուսալի կապ և կարծիքների տարբերություն:

Աղյուսակ 9.

Ման Վիթնի թեստի արդյունքները փոփոխականների մասին կին և տղամարդ արտահանողների կարծիքների վերաբերյալ*

h	Փոփոխականները	U** ինդեքսը	Z*** ինդեքսը	P-Value****
1	Ձեռագործ գորգի իրացման գնի նվազում	78	-0.928	0.380
2	Արտադրության ոլորտում գիտական և մասնագիտական ներուժի աճ	29	2.203	0.024
3	Շուկայական պահանջարկի և ճաշակի ուսումնասիրություն՝ միջազգային շուկայում	58.5	1.446	0.163
4	Մրցակիցների սադրանքների չեզոքացում	76.5	0.965	0.353

5	Համեմատական առավելության ստեղծում ձեռագործ գործերի կապակցությամբ	67.5	-1.2	0.246
6	Առավել մեծ վերահսկողություն՝ Իրանի ձեռագործ գորգի նկատմամբ	99.5	-0.375	0.725

* Աղյուսակը կազմվել է SPSS ծրագրի օգնությամբ:

** U ինդեքսը = Mann-Whitney U test- ի ինդեքսը

*** Z ինդեքսը = Mann-Whitney U test- ում, SPSS հաշվարկներում ավտոմատ ստացվող Z ինդեքսը

**** P-Value= Հուսալիության աստիճանը (Significance level)

Mann-Whitney U թեստում Z և U ինդեքսների հիման վրա հաշվարկվում է հուսա-լիության աստիճանը, այն ենթադրությամբ, որ կարելի է ընդունել կամ մերժել տվյալ վարկածը:

Կիրառել ենք Սպիրմանի գործակցի (Spearman's Coefficient - ոչ պարամետրիկ) և Պիերսոնի գործակցի (Pearson's Coefficient - պարամետրիկ) թեստերը, որպեսզի պարզենք հետազոտության փոփոխականների վերաբերյալ արտահանողների կարծիքներում համապատասխանաբար՝ կրթության մակարդակի և տարիքի ազդեցությունը: Երկու դեպքերում էլ, քանի որ հուսալիության աստիճանը 0.05-ից բարձր է, եզրակացնում ենք, որ կրթության մակարդակն ու տարիքը չեն ազդում արտահանողների կարծիքների վրա:

Աղյուսակ 10.

Սպիրման և Պիերսոն թեստերի արդյունքները հարցվողների կարծիքներում կրթության մակարդակի և տարիքի ազդեցության վերաբերյալ*

Փոփոխականներ	Կրթություն		Արդյունք	Տարիք		Արդյունք
	Սպիրմանի գործակից	Հուսալիության աստիճան		Պիերսոնի գործակից	Հուսալիության աստիճան	
Ձեռագործ գորգի իրացման գնի նվազում	0.005	0.962	Չկա կապ	-0.046	0.685	Չկա կապ
Արտադրության ոլորտում գիտական և մասնագիտական ներուժի աճ	-0.139	0.22	Չկա կապ	0.145	0.199	Չկա կապ
Շուկայական պահանջարկի և ճաշակի ուսումնասիրություն՝ միջազգային շուկայում	-0.003	0.979	Չկա կապ	-0.078	0.493	Չկա կապ
Մրցակիցների սադրանքների չեզոքացում	-0.211	0.06	Չկա կապ	-0.101	0.374	Չկա կապ

Համեմատական առավելության ստեղծում ձեռագործ գործերի կապակցությամբ	-0.219	0.051	Չկա կապ	-0.109	0.338	Չկա կապ
Առավել մեծ վերահսկողություն՝ Իրանի ձեռագործ գորգի նկատմամբ	-0.122	0.283	Չկա կապ	-0.07	0.539	Չկա կապ

* Աղյուսակը կազմվել է SPSS ծրագրի օգնությամբ:

Հետազոտողը հարցում է կատարել գորգի արդյունաբերության 25 փորձագետից՝ վերջին տասնամյակում գորգի արտահանումների նվազման պատճառների վերա-բերյալ: Չնայած առկա բազմաթիվ խնդիրներին, վերջին տասնամյակում 7 գլխավոր պատճառներ հանգեցրել են Իրանի ձեռագործ գորգերի համաշխարհային շուկա արտահանման ծավալների կրճատմանը: դրանք են՝

1) Իրացման շուկայի և այցելուների պահանջարկի վերաբերյալ գիտելիքի բացակայությունը՝ 23%,

2) Երկրում աշխատուժի, որակյալ հումքի և ռեսուրսների բարձր գները՝ 20%,

3) Աշխարհում գովազդային թույլ գործունեությունն ու առևտրային անվան թերի տնօրինումը՝ 18%,

4) Ձեռագործ գորգի արտահանման հարցում ռազմավարական պլանավորման բացակայությունը՝ 17%,

5) Ձեռագործ գորգի արտադրության մեջ ցածրորակ նյութերի օգտագործումը՝ 9%,

6) Համաշխարհային շուկայում մրցակցության աճը՝ 7%,

7) Մրցակիցների կողմից մրցակցային առավելությամբ օժտված լինելը՝ հաշվի առնելով որոշակի հարցեր, այդ թվում՝ էժան աշխատուժը՝ 6%:

Ատենախոսության **եզրակացություններ** բաժնում ելնելով հետազոտության տեսական ու գործնական բաժիններից, ամփոփված են հետևյալ հիմնական եզրահանգումները և առաջարկությունները.

- Հիմք ընդունելով ատենախոսության երրորդ գլխում փոփոխականների վիճակագրական վերլուծության արդյունքները, հիմնավորվեցին հետազոտության բոլոր վարկածները: Ըստ արտաքին առևտրում առաջնահերթության, դասակարգվեցին հետազոտության վարկածները, և ուսումնասիրվեցին արտահանողների տարիքի, կրթության մակարդակի և սեռի փոփոխականների նշանակությունը: Նշված փոփոխականներից որևէ մեկը դերակատարություն չունեն արտահանման ծավալների մեծացման հարցում, բացառությամբ՝ գորգի արտադրության և առևտրի գծով գիտամասնագիտական ներուժի մեծացման փոփոխականը: Ի վերջո, հաշվի առնելով հարցազրույցի, գրականության և քանակական տվյալների վերլուծությունը, հեղինակը հանգել է այն եզրակացությանը, որ պատժամիջոցների չեղարկմամբ ու գիտելիքահեն կառավարման կիրառմամբ հնարավոր է դառնալու նպատակների ապահովումն ու արտաքին առևտրի ընդլայնումը:

- Իրանի ԱՀԿ անդամակցությամբ երկիրն անցում է կատարելու ազգային տնտեսությունից՝ միջազգային տնտեսություն, ներքին առևտրից՝ արտաքին առևտուր, ավանդական առևտրից՝ արդիական առևտուր և ազգային արտադրությունից՝ միջազգային արտադրություն: Ժամանակակից արտադրության և առևտրի կիրառումը հանգեցնելու է ձեռագործ գործերի առավելության ձևավորմանը, գիտամասնագիտական ներուժի մեծացմանը, ավելանալու է արտաքին շուկաների մասնաբաժինը, և արդյունքում գրանցվելու է առևտրի ոլորտում աճ և Իրանի տնտեսության զարգացում:

- Սույն հետազոտության շրջանակներում հիմնավորվեց նաև «մրցակիցների հնարքների չեզոքացման» հարցով վարկածը: Քանի որ բոլոր երկրների միավորման արդյունքում նրանք ավելի տեղեկացված են դառնում միմյանց առևտրային գծով քաղաքականությունների ու հնարքների մասին, ապա ուսումնասիրելով ազատ առևտրի ոլորտում, կարելի է ավելին տեղեկանալ մրցակիցների ռազմավարություններին և դիտարկել նրանց թույլ կողմերը: Եվ հասանելի կդառնա համաշխարհային շուկայում մրցակիցների գործունեության մասին տեղեկատվությունը, ինչը հանգեցնելու է նրանց հնարքների չեզոքացմանը: Հետևաբար, մեծանալու է ներքին և արտաքին շուկաներում իրանական գործերի մասնաբաժինը, որի արդյունքում զարգանալու է Իրանի գործերի արտաքին առևտուրը:

- Իրանը ԱՀԿ անդամակցության արդյունքում, միջազգային մասշտաբով ակտիվ դերակատարություն է ունենալու ձեռագործ գործի համեմատական առավելության ապահովման ու զարգացման նպատակով: Քանի որ ակնառու է միջազգային շուկաներում այս ազգային կապիտալի ինքնատիպ ու արժեքավոր ներուժը, ապա այն հանգեցնելու է ձեռագործ գործի համեմատական առավելության բարձրացմանը: Այս հանգամանքներում, համեմատական առավելություն ունեցող արտադրանքի գնի կառավարումն առավել դյուրին է լինելու, և այլևս մրցակիցների համեմատ իրանական գործի գնի աճը չի հանգեցնելու արտահանումների կրճատմանը:

- Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ԱՀԿ անդամակցությանը զուգընթաց վերանալու են արգելքները և չեղարկվելու են սպառնալիքներն ու սահմանները և հնարավորություններ են ստեղծվելու ազատ առևտրի համար, ապա ավելի է մեծանալու միջազգային շուկաների վերահսկումը: Առևտրի ոլորտում արդիական տեխնոլոգիաներով պայմանավորված, մրցակիցների հնարքների ընկալումը, ինչպես նաև թիրախային շուկաների միջազգային մշակույթի գիտակցումն ու գովազդի կառավարման տիրապետումը հանգեցնելու են միջազգային շուկաների վերահսկման հզորացմանը, արդյունքում մեծացնելով արտաքին ներդրումները և զարկ տալով Իրանի տնտեսությանը և ձեռագործ գործերի ոլորտում արտաքին առևտրին:

- Առաջարկություններ

Ելնելով իրականացված հետազոտության արդյունքներից, հետազոտողը յուրաքանչյուր վարկածի համար հերթականությամբ մեկ առաջարկությամբ է հանդես եկել: Հաշվի առնելով տեխնոլոգիայի զարգացումը և արդյունաբերական

ոլորտներում, ապրանքատեսակներում ու ծառայություններում ստեղծագործական տեխնոլոգիաների կատարելագործումը, արտադրողների աճն ու ողջ աշխարհում հաճախորդների ու սպառողների ճաշակների մեծ բազմազանությունը, ԱՀԿ անդամակցության համար պահանջվում է յուրաքանչյուր ռազմավարության և պլանավորման շրջանակներում մեծ տեղ տալ գիտելիքի կառավարմանը, որպեսզի մրցակցային դաշտում հնարավոր լինի գոյատևել: Իհարկե, ներկա դրությամբ, պատժամիջոցների ճգնաժամի առկայության պայմաններում հնարավոր է միջազգային գործունեություն ծավալել արևելյան Ասիայի երկրներում:

- Ցանկալի է, որպեսզի Իրանի կառավարությունն աջակցություն ցուցաբերի վարչարարական բյուրոկրատիայի, մաքսային ծախսերի, տրանսպորտի և պահեստավորման հարցերում: Ինչպես նաև հարկավոր է քայլեր նախաձեռնի գնի կառավարման, կրկնակի ինժեներական աշխատանքների, պատվերի ծավալներին համապատասխան արտադրության մեթոդի (Just In Time) կիրառման, նոր տեղեկատվություն ձեռք բերելու և արտասահմանյան ուղևորությունների նպատակով արտահանողներին աջակցության ուղղությամբ, որոնց շնորհիվ նախադրյայներ կապահովվեն ձեռագործ գորգի ինքնարժեքի կրճատման համար:

- Առաջարկվում է, որ կառավարությունը հիմնադրի մի համալսարան կամ ուսումնական կենտրոն՝ գորգի միջազգային մարկետինգի, գորգի շուկաների ուսումնասիրման, արտադրության, արտաքին առևտրի և այլ ոլորտներում մասնագիտացված արտահանողներ պատրաստելու նպատակով: Ինչպես նաև կիրառել՝ արդի մեթոդներ մրցակցային հարթակում, «առցանց մտավոր փոթորիկներ», օգտվել զարգացած երկրների փորձից և կառավարել հաճախորդի հետ կապերը (client relation management /CRM/): Այս ամենը կհանգեցնեն իրանական ձեռագործ գորգերի ոլորտում մասնագիտական գիտական ներուժի հզորացմանը:

- Զբոսաշրջությունը ևս բավականին մեծ մասնաբաժին ունի ցանկացած երկրի տնտեսական զարգացման հարցում: Կառավարությունն զբոսաշրջիկների ներգրավման պայմանների ապահովմամբ կարող է իրանական գորգն ուղղակիորեն և առանց միջնորդների, արտադրողից սպառողին ներկայացնել և հաճախորդին վաճառել ցանկալի պայմաններով ու գնով, առանց տրանսպորտի և մաքսային ծախսերի:

- Կառավարությանը հաջողվում է սահմանելով արտահանման ոլորտի ռազմավարություն, սահմանել առաջնահերթությունները, հատկացնել ռեսուրսներ և նախատեսել որոշակի գործողություններ՝ առևտրին թափ հաղորդելու և ապրանքների արտադրության հարցում համեմատական առավելությունը բարձրացնելու ուղղությամբ, որպեսզի ավելացնի տնտեսական ավելացված արժեքը և ընդլայնի նոր միջազգային շուկաները: Հետևաբար, ձեռագործ գորգը համեմատական առավելության ապահովման ու բարձրացման շնորհիվ կներկայացվի և կմատակարարվի ամբողջ աշխարհում և մրցակից գորգերի համեմատության մեջ կհիմնավորվի իրանական գորգի ինքնատիպ և յուրահատուկ լինելու հանգամանքը:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի կողմից հրապարակված հետևյալ գիտական հոդվածներում.

1. Mansureh Golmeymi . Word trade organization and its influence on trade. Finance and economics. Yerevan, No. 11, Nov 2010, pp. 46–48.
2. Mansureh Golmeymi, Membership of Iran in WTO: aims, consequences and challenges Finance and economics. Yerevan, No. 11, 2010, pp. 49–50.
3. Mansureh Golmeymi, Study of the obstracles and problems in exporting handmade carpets of Khorasan province, Iran. Izvestiya GAUA, No. 4, 2010. pp. 185–188.
4. Mansureh Golmeymi, Mehrdad Syadat Nasab, A. Hovakimiyan, Yaghoob Ansari. Influence of Iran's Membership in World Trade Organization to Make Comparative Advantages at Handmade Carpet MarketsScience Series Data Report, USA, N4, 2012.- pp. 55-62.
5. Mansureh Golmeymi, Majid Mirvaisib, Behnam Malekic and Zahra Shirzour Aliabadi. An empirical study on the effect of WTO membership on Iranian Handicraft industry: A case study of Persian carpet. Management Science Letters 3(7), 2013. pp. 1375–1380. DOI: 10.5267/j.msl.2013.04.012.
6. Mansureh Golmeymi and Mehrdad Syadat Nasab. A study on effect of world trade organization on Iran's membership on export of Iranian handmade carpet. Management Science Letters 3(8), 2013, pp. 2669–2674. DOI: 10.5267/j.msl.2013.08.035.
7. Mansureh Golmeymi, Habibo Allah Doaei, Seyed Taher Alavy Namvar. The Impact of International Cultural Dynamics on Export Iran's Handmade Carpet. Jurnal UMP Social Sciences and Technology Management 3(2), 2015. pp. 656–664.
8. Golmeymi Mansureh, Habibo Allah Doaei, Taher Alavy. Examining the Effect of International Researches and Advertisements on Development of Iranian Handmade Carpet Export. Jurnal UMP Social Sciences and Technology Management 3(1), 2015, pp. 246–252.
9. Mansoureh Golmeymi, Seyed Taher Alavi Namvar, Ali Mohammad Safania. Analysis of the Role of Artificial Intelligence in the Effectiveness of Digital Marketing and Its Impact on Customer Satisfaction in the International Markets of Iranian Handwoven Carpets. 1st International Conference on Persian Carpets (ICPC-I). CONFERENCE BOOK. ISBN: 978-622-5063-06-8. Budapest, Hungary, 2025. pp 7-8

МАНСУРЕ ГОЛМЕЙМИ

ОЦЕНКА ВЛИЯНИЯ ВОЗМОЖНОГО ЧЛЕНСТВА ИРАНА В ВТО НА ЕГО ВНЕШНЮЮ ТОРГОВЛЮ (НА ПРИМЕРЕ РЫНКА КОВРОВ РУЧНОЙ РАБОТЫ)

Диссертация представлена на соискание ученой степени кандидата экономических наук по специальности: 08.00.02 - «Экономика и управление хозяйством и его отраслями».

Защита диссертации состоится 24-го сентября 2026 года в 14:00 на заседании Специализированного совета по экономике 014 Комитета по высшему образованию и науке Республики Армения, действующего в Армянском государственном экономическом университете, по адресу: 0025, ул. Налбандяна 128, г. Ереван, РА.

РЕЗЮМЕ

Поскольку Всемирная торговая организация (ВТО) является одной важнейших организаций, способных оказать влияние на внешнюю торговлю, она играет большую роль в структуре экономики любой страны. Ковры ручной работы являются вторым после нефти источником валютных поступлений в экономику Ирана и основным продуктом ненефтяного и общего экспорта. Производство ковров ручной работы в Иране является важной отраслью, которая в последнее время находилась под угрозой в связи с увеличением конкурентов на мировом рынке, а также отсутствием должного внимания со стороны правительства и ответственных лиц отрасли. Одним из путей решения данной проблемы является присоединение Ирана к ВТО, в результате которого экономика страны получит много преимуществ. Следовательно исследования в данной области играют важную роль для понимания преимуществ, получаемых в результате присоединения Ирана к ВТО, и выявления путей вступления Ирана в ВТО в целях достижения экономического роста.

Данное исследование направлено на развитие эффективности экономики и торговли Ирана на международном уровне, принимая во внимание положительное влияние вступления в ВТО на производство ковров ручной работы.

Цель и задачи исследования.

Основной целью диссертации является развитие экономики Ирана и увеличение объемов экспорта с учетом положительных последствий вступления Ирана в ВТО в сфере внешней торговли коврами ручной работы.

Для достижения указанной цели в работе поставлены следующие задачи:

✓ изучить сущность ВТО и ее преимущества во внешней торговле;

- ✓ изучить экспорт иранских ковров и экспорт ковров конкурентов в последние годы;
- ✓ проанализировать преимущества членства в ВТО в развитии внешней торговли;
- ✓ проанализировать иерархию преимуществ членства в ВТО, демографические характеристики экспортеров в сфере экспорта и значение управления, основанного на знаниях;
- ✓ найти решения по улучшению положения ковров ручной работы на мировом рынке, увеличению объемов экспорта и доли на внешних рынках и представить рекомендации.

Научная новизна исследования состоит в следующем:

Научная новизна исследования получена как в результате теоретических, так и практических изысканий, которые могут быть представлены в следующем ряду:

1. на основе статистического и количественного анализа выявлены и классифицированы по степени значимости преимущества членства Ирана в ВТО в сфере производства ковров ручной работы;
2. выявлены научно обоснованные подходы и основные направления развития экспорта иранских ковров ручной работы с учетом опыта стран-конкурентов и рыночного позиционирования;
3. разработана концептуальная модель увеличения объемов экспорта иранских ковров ручной работы на мировом рынке с учетом возможности членства в ВТО.

MANSOUREH GOLMEYMI

ASSESSING THE IMPACT OF IRAN'S POTENTIAL WTO MEMBERSHIP ON ITS FOREIGN TRADE: THE CASE OF THE HANDMADE CARPET MARKET

The abstract of the dissertation is submitted for pursuing the degree of Ph.D. in Economics in the field 08.00.02 - "Economy, the economics of its spheres and control".

The defense of the dissertation will take place at 14:00 on 24th september at the Meeting of Specialized Council 014 in Economics of the Higher Education and Science Committee of the Republic of Armenia, acting at the Armenia State University of Economics. Address: 128 Nalbandyan Street, Yerevan, 0025, RA.

ABSTRACT

Since the World Trade Organization (WTO) is one of the most important organizations capable of influencing foreign trade, it plays a significant role in the economic structure of any country. Handmade carpets are the second-largest source of foreign currency earnings for Iran's economy after oil, and constitute the primary product of non-oil and total exports. The production of handmade carpets in Iran is an important industry that has recently come under threat due to increasing competition in the global market, as well as a lack of proper attention from the government and industry stakeholders. One way to address this problem is Iran's accession to the WTO, which would bring numerous benefits to the country's economy. Therefore, research in this area plays an important role in understanding the advantages gained from Iran's accession to the WTO and identifying pathways for Iran's entry into the WTO in order to achieve economic growth.

This research aims to develop the efficiency of Iran's economy and trade at the international level, taking into account the positive impact of WTO accession on the production of handmade carpets.

Research aim and objectives.

The main objective of the dissertation is to develop Iran's economy and increase export volumes, considering the positive effects of Iran's WTO accession in the sphere of foreign trade in handmade carpets.

To achieve this objective, the following tasks are set in the work:

- ✓ to study the essence of the WTO and its advantages in foreign trade;

- ✓ to study the export of Iranian carpets and the export of competitors' carpets in recent years;
- ✓ to analyze the advantages of WTO membership in the development of foreign trade;
- ✓ to analyze the hierarchy of advantages of WTO membership, the demographic characteristics of exporters in the export sector, and the importance of knowledge-based management;
- ✓ to find solutions to improve the position of handmade carpets on the world market, increase export volumes and market share in foreign markets, and present recommendations.

Scientific novelty of the research

The scientific novelties of the research were resulted from both theoretical and empirical study which can be listed as follows.

- Based on statistical and quantitative analyses, the advantages of Iran's accession to the WTO in the handmade carpet production sector have been identified and classified according to their significance.
- Identified the scientifically grounded approaches and key directions for developing Iran's handmade carpet exports, taking into account the experience and market positioning of competitor countries.
- Developed a conceptual model for increasing Iran's handmade carpet exports to the global market, considering the potential accession to the WTO.